ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/62

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.05.2018թ. թիվ 03/26-3/9136-18 գրությամբ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.05.2018թ. թիվ ԴՎԱ/1784 գրության հիման վրա, 22.05.2018թ. թիվ 03/26-3/9136-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի՝ հայտերի բացման նիստի ավարտի օրը 05.02.2018թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն:

Նույն արձանագրության 4.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթին «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները: Բացի այդ, «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ, ինչպես նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և 3-րդ

կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրը անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով, որը «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից չի ներկայացվել, հետևաբար վերոնշյալ պայմանագիրը որպես նմանատիպ գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Հանձնաժողովը կասեցրել է նիստը և Ընկերությանը ծանուցել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է շտկված անհամապատասխանությունները: 06.04.2018թ. ժամը 11:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրել է հետևյալը.

«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է ապրանքների տեխնիկական բնութագրերի ծանոթության բաժնում նշված պահանջներ, մի շարք հարկային հաշիվներ, սակայն չի ներկայացրել նմանատիպ պայմանագրեր, ինչպես նաև ներկայացրել է մինչև անհամապատասխանության շտկումը ուղարկելը ներկայացրած նույն փաստաթղթերը: Քննարկելով վերոնշյալ փաստաթղթերը գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի հայտը 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժիններով:

«Գնումների մասին» << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

<< կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթին:

Ընթացակարգին մասնակցելու, ինչպես նաև մսի և մսաբուսական պահածոների մատակարարումները համատեղ իրականացնելու նպատակով «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի և «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի միջև կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր: Վերոհիշյալ համատեղ գործունեության պայմանագրի 1.2.2-րդ կետի համաձայն՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի վրա դրվել է մասնագիտական փորձառություն ապահովելու պարտականությունը:

Սակայն թյուրիմացաբար Ընկերության կողմից հայտի հետ միասին չի ներկայացվել նշված համատեղ գործունեության պայմանագիրը, որից պարզ կդառնար, որ Ընկերությունը Ընթացակարգին մասնակցում է կոնսորցիումով՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ միասին:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ Ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից և վերջինիս առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Այնուհետև՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2018թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգին «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատաս-խանություններ, մասնավորապես՝

1. ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները:

2. «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ, ինչպես նաև «Էլիտ Գրուպ»

ՓԲԸ-ի և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրն անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով, որը «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից չի ներկայացվել, հետևաբար վերոնշյալ պայմանագիրը որպես նմանատիպ գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը և Ընկերությանը ծանուցել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է ապրանքների լիարժեք տեխնիկական բնութագրերը, մասնավորապես ծանոթության բաժնում նշված պահանջները: Այս մասով մրցույթի գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը շտկվել են:

Ինչ վերաբերվում է նմանատիպ պայմանագրեր ներկայացնելու պահանջին, ապա հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն տվյալ մրցույթին, ըստ էության, մասնակցել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ կոնսորցիումով, ապա կրկին ներկայացրել է նշված երկու ընկերությունների միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի համաձայն՝ մասնագիտական փորձառության որակավորման չափանիշի մասով պատասխանատու՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից կատարված համանման պայմանագրերը:

Այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի հայտը այն հիմնավորմամբ, որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից համատեղ գործունեության պայմանագիրը «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ ներկայացվել է միայն երկրորդ փուլում, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրն անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով: Ուստի նման պայմաններում «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիրը չի համարվել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի համար որպես նմանատիպ:

Ընկերությունը գտնում է, որ նման պայմաններում «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի

6-րդ կետի «ա» ենթակետով սահմանված գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, քանի որ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը շտկվել են և ներկայացվել գնահատող հանձնաժողովին:

Ինչ վերաբերում է նմանատիպ պայմանագրերի վերաբերյալ արված դատողությանը, ապա «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն Ընթացակարգին ըստ էության մասնակցել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ կոնսորցիումով, ուստի կրկին ներկայացրել է համատեղ գործունեության պայմանագրի համաձայն՝ մասնագիտական որակավորման չափանիշի մասով պատասխանատու՝ կոնսորցիումի երկրորդ մասնակից՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի կողմից կատարված պայմանագրերը:

Նման պայմաններում գուցե իրավաչափ է մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ, քանի որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն համատեղ գործունեության պայմանագիրը պետք է ներկայացներ մրցույթի մասնակցության հայտով, սակայն Ընկերության կարծիքով «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից թույլ չի տրվել գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, քանի որ շտկումները սահմանված ժամկետում կատարվել են, սակայն հրավերի պահանջներից ելնելով՝ ներկայացված համանման պայմանագրերը չեն քննարկվել գնահատող հանձնաժողովի կողմից , քանի որ համատեղ գործունեության պայմանագիրը ներկայացվել է ոչ թե մրցույթի մասնակցության հայտով, այլ երկրորդ փուլում: Այսինքն «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից առկա է ոչ թե գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, այլ Ընկերության կողմից մասնակցության հայտի սխալ պատրաստում:

Ընկերությունը << գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին չվերագրել Գնումների մասին» << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, և որպես հետևանք Ընկերությանը չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/62 ընթացակարգի շրջանակներում 25.05.2018թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.05.2018թ. թիվ ԴՎԱ/1784 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով գնահատող հանձնաժողովի կողմից «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: 06.02.2018թ. Ընկերության էլեկտրոնային փոստին ծանուցում է ուղարկվել հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակցի համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու համար: «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, մասնավորապես՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթություն բաժնում նշված պահանջները: Բացի այդ, «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ, ինչպես նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրը անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով, որը Ընկերության կողմից չի ներկայացվել, հետևաբար վերոնշյալ պայմանագիրը որպես նմանատիպ գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել: Ընկերությանը ծանուցում է ուղարկվել սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին ներկայացրել է ապրանքների տեխնիկական բնութագրերի ծանոթություն բաժնում նշված պահանջները, մի շարք հարկային հաշիվներ, սակայն չի ներկայացրել նմանատիպ պայմանագրեր,

ինչպես նաև ներկայացրել է մինչև անհամապատասխանության շտկումը ուղարկելը ներկայացրած նույն փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/62 ընթացակարգի շրջանակներում 25.05.2018թ. ժամը 11:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մսի պահածոյի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն 05.02.2018թ. ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով, որին 06.02.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 29.03.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Արտաշատի

պահածոների գործարան» ԲԲԸ-ին՝ հայտնելով, որ վերջինիս կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես.

- Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները.

- Ընկերության կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ, ինչպես նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրն անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով, որը Ընկերության կողմից չի ներկայացվել, հետևաբար վերոնշյալ պայմանագիրը որպես նմանատիպ գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Վերոհիշյալ ծանուցմամբ Ընկերությանը առաջարկվել է մեկ աշխատանքային օրյա ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.04.2018թ. ժամը 11:00-ին կայացրած որոշմամբ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել է, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացվել են մի շարք հարկային հաշիվներ, սակայն չեն ներկայացվել նմանատիպ պայմանագրեր, ինչպես նաև ներկայացվել է մինչև անհամապատասխանության շտկումն ուղարկելը ներկայացրած նույն փաստաթղթերը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Մհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2018թ. թիվ 03/26-3/9136-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.05.2018թ. թիվ ԴՎԱ/1784 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված

որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.5-րդ ենթակետով նախատեսվել է, որ մասնակիցը «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքնագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմից գրավոր հավաստումը:

Ընդ որում՝ մասնակցի որակավորումն այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մսի պահածոյի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն 05.02.2018թ. ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ չափաբաժինների մասով, որին 06.02.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացվել է ապրանքի ամբողջական նկարագիր, «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի և «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.12.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիր և որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և «ՄյասոՕպտՄնաբ»

կազմակերպության միջև 16.09.2016թ. կնքված սննդամթերքի մատակարարման պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հրավերով պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը լիարժեք չեն՝ բացակայում են ծանոթության բաժնում նշված պահանջները.

- Ընկերության կողմից ներկայացվել է համատեղ գործունեության պայմանագիր «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի հետ, ինչպես նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և 3-րդ կազմակերպության միջև կնքված սննդամթերքի գնման պայմանագիր, այնինչ համատեղ գործունեության պայմանագիրն անհրաժեշտ էր ներկայացնել մրցույթի մասնակցության հայտով, որը Ընկերության կողմից չի ներկայացվել, հետևաբար վերոնշյալ պայմանագիրը որպես նմանատիպ գնահատող հանձնաժողովի կողմից չի քննարկվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 29.03.2018թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկվել են տեխնիկական բնութագրում արձանագրված անհամապատասխանությունները: Միևնույն ժամանակ Ընկերության կողմից կրկին ներկայացվել է «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի և «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի միջև 20.12.2017թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը և որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագիր՝ «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և «ՄյասոՕպտՄնաբ» կազմակերպության միջև 16.09.2016թ. կնքված սննդամթերքի մատակարարման պայմանագիր՝ կից հաշիվ-ապրանքագրերով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.04.2018թ. ժամը 11:00-ին կայացրած որոշմամբ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ներկայացված հայտը

մերժել է, այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացվել են մի շարք հարկային հաշիվներ, սակայն չեն ներկայացվել նմանատիպ պայմանագրեր, ինչպես նաև ներկայացվել է մինչև անհամապատասխանության շտկումն ուղարկելը ներկայացրած նույն փաստաթղթերը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մսի պահածոյի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը հայտի թիվ 3 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, մինչդեռ Ընկերության ներկայացրած «Մասնագիտական փորձառություն» չափանիշի մասով որակավորումը հիմնավորող փաստաթղթերում արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել և որպես նմանատիպ պայմանագիր ներկայացվել է «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ի և «ՄյասոՕպտՍնաբ» կազմակերպության միջև 16.09.2016թ. կնքված սննդամթերքի մատակարարման պայմանագիրը, այն դեպքում երբ, Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ համանման (նմանատիպ) պայմանագիրը պետք է իրականացված լինի հայտը ներկայացրած մասնակցի կողմից:

Անդրադառնալով «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշմանը, հայտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 1-2-րդ

կետերը սահմանում են, որ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

Վերոհիշյալ նորմի համաձայն՝ կոնսորցիումի պայմանագիրը ներկայացվում է ի սկզբանե հայտով, ընդ որում հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները: Հետևաբար կոնսորցիումի պայմանագիրն այլ փուլում ներկայացվելու դեպքում այն չի կարող հիմք ընդունվել և գնահատման առարկա դառնալ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:

Դրա հետ մեկտեղ հայտնում եմ նաև, որ Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետը սահմանում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր): Տվյալ դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով առանձին հայտ է ներկայացրել նաև «Էլիտ Գրուպ» ՓԲԸ-ն:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 22.05.2018թ. թիվ 03/26-3/9136-18 գրությամբ «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին (ՀՎՀՀ՝ 04200616) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Արտաշատի պահածոների գործարան» ԲԲԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ